

Թիւ 26925  
Յունիս 30, 1980

Յարգելի  
Տիար Յակոբ Ասատուրեան  
Նիւ Եորք.

Սիրելի Յակոբ,

Այսու գիրով մեր խորին շնորհակալութիւնը կը յայտնենք ձեզի՝  
որ բարի եղաք պատասխանելով ներկայացուած խնդրանքին Առաջնորդա-  
րանի համալիրին համար նուիրել զեղեցիկ գորգ մը:

Չեոնարկած ենք Առաջնորդարանը բարեգարդելու աշխատանքին եւ  
ձեր ու ձեզի նման ազնիւ ազգայիններու ցուցաբերած հետաքրքրու-  
թիւնն ու կատարած նուէրները մեծապէս պիտի նպաստեն այս աշխատան-  
քի փութացման եւ արդիւնաւորման:

Կ'աղօթենք որ Տէրը իր շնորհներով զարդարէ ձեր եւ ձեր հարա-  
գասներուն կեանքը եւ բոլորիդ պարգեւէ բաջաոդջ ու երկար տարի-  
ներ:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐԸՆՊԻՍԿՈՊՈՍ  
Առաջնորդ